

փորձէի բողոքել տաք տաք երեսիս նետուած այս արիւնալի կտակածներն զէմ, Հրանտ ա՛նապարանօք ոտքի ելաւ, եւ գէպ ի դուռը քայլելով արագութեամբ,

— Հո՛ւ է, հո՛ւ, ամբողջ մարդկային բարոյականը հո՛ւ է, գոչից յուռութեամբ մատնանշելով կուրծքին վրայ:

Ու անյայտ եղաւ մութին մէջ:

Աղեփամեղդրիս

ԵՐՈՒԽԱՆՆ



ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական եղգերի ծաւալումը եւ ազդեցութիւնը

Ժողովրդական եղանակների բարբառներ.

— Ժողովրդական եղանակները սեյտ առնչութիւն եւ բնական կապ ունին տեղական պայմանների հետ, որոնք ծնում են միջավայրին յատուկ ոճեր. ուստի մի երաժշտական միտք, այլ եւ այլ տեղերում ստանում է տեսակ տեսակ բնորոշ արտայայտութիւն: Մի տեղ պարզ է եղանակի ոճը, միւս տեղ ճապաղ. մէկ տեղ լերկ, մի չորրորդում ոլորուն, հինգերորդում տափակ, վեցերորդ տեղում գեղարուեստական, եւայլն: Թէպէտ ձեւով եւ արտայայտութիւնով զանազան են, բայց եւ բոլորի հիմքը նոյնն է, բոլորն էլ ունին մի ընդհանուր երաժշտական արմատ, որ յատուկ է Հային:

Տեղական եղանակներից ծագում են երաժշտական գաւառական բարբառներ, որոնք այնքան որոշ են, որ գիւղացին օրում է մէկը միւսից աշխարհագրական անուններով:

Նախ ազգային եւ օտար երաժշտութիւնն սահմանն է դնում այսպէս: Հայի, քրդի եւ տաճկի եղանակ են ստում արեւմտեան Հայերը, իսկ հայի, քրդի, թուրքի (թաթարի) եւ պարսկի՝

արեւելահայները: Նոյնպէս յոյն, ասորի, ռուս եւ ուրիշ եղանակներն անուններ էլ են յիշում, բայց վերի բերածները, իւրաքանչիւրն իր համապատասխան լեզուով, երգում էլ է:

Իր եղանակները բաժանում է այսպէս: Սարի եւ արմաի (դաշտի) եղանակ ստեղծվ մի բնական աշխարհագրական սահման է քաշում երգի մէջ: Երկրորդ՝ Ալաբախայ, Շիրակայ, Ալաշկերտու, Վանայ, Մոկաց, Մշոյ, Ակնայ, եւայլն եղանակ ստեղծվ խմբում է նման երաժշտական, գաւառական բարբառներն իրար մօտ: Երրորդ՝ Կողքի, Իգդիրի, Բլուրի, Սար-դարապատի, Գառնուայ, Գանաքեռի, Ակքուշակի, Մաստարայի եւայլն եղանակ ստեղծվ էլ մասնաւորում է գաւառական վրայ իշխող գեղերի երաժշտական ոճը, որ աւելի գեղարուեստորէն է ներկայացնում ընդհանուրի ոգուն յատուկ գծերը: Օրինակ, արեւելեան հայ գեղջուկի համար յարգի, անուանի, գովական եւ հեղինակուոր են Կողք գեղի եղանակները:

Այս անգամ, գծադրաբար, քաղաքական հանգամանքներն արգելե եղան, չը կարողացանք հայ ժողովրդական բարբառների սահմանակի ուսումնասիրութիւնները լրացնել եւ իւրաքանչիւր աշխարհագրական եւ երաժշտական ստոյգ սահմանները որոշել:

Ժողովրդական եղանակի կեանքը. — Ժողովրդական եղանակների կեանքն ընդհանրապէս կարճ է. որովհետեւ նորերը շուտ շուտ են զուրկ գալի, ընդհանրանում են, ինչպէս հետաքրքրական լուր, եւ արմատ ձգում այնքան շատ, խոր եւ մեծ, որքան աւելի են համապատասխանում զանազան տեղերի ժողովրդական կեանքի պայմաններին:

Տեւական եւ զբմացկուն են շինական, ծխական, վիպական, վիպաքնարական, անտունի եղանակները, որոնք դարերով եւ ամուգ կապուած են ժողովրդական սոցիալիստների եւ աւանդութիւնների հետ: Բայց որովհետեւ բարդ են, գիւղացիներից շատին անմատչելի են: Այժմ իմացողներին մատով են ցոյց տալի: Սովորութիւնների հետ այս կարգի եղանակներն էլ են կորչում:

Վիպականը բարդ է, որովհետեւ անբաժան է եւ վէպը եղանակից: Պատմական վիպաքնարականը Թէպէտ պարզ եղանակ ունի, բայց

երկար պատժութիւնն է : Շինականներից
գոնուար են գտնվողները Միսականից՝ հարս-
նեկանները , որոնք հետ հիւսուած են մի շարք
արարողութիւններ , եւն :

Ընդհակառակն են խաղերը , մանաւանդ
պարերգերը , որոնք շատ շուտ են անշայտանում :
որովհետեւ իւրաքանչիւրը պատկերացնում է
կենանքի մի առիթունն իրազէ , կապուած է մի
որով անհատի հետ :

Պարերգերը հատ հատ եւ թուցիկ զգա-
ցունների մի շար են եւ բովանդակութեան հա-
մանայն էլ արտայայտութիւն են փոխումս Բուն
պարերգի ստեղծութիւն ու մեղմիլը մէկ է լինում
Մի իրազէում է յղանում : եւ երբ անցնում են
բողիէն նկարագրող հանգումները , ամուռն
են եւ իրենց հետ համապատասխան պարերգի
հղանակը : Քիչ երկար կուտնք են վայելում
այնպիսիները , որոնք զուր են զալի որ եւ է
զրուել յատկութիւնով՝ չափով , եղանակով ,
քառերի պատկերաբերութիւնով եւն : կամ այն-
պիսիները , որոնք իրական անցքի , դիպումս
են վերաբերում եւ կապուած որոշ անգի հետ :
Եթէ , նոյն խաղ , նման գէպներն ու անուններն
էլ չփոխեն , եղանակը պահում են :

Դուք չեկած երգին կարեւորութիւն չեն
առաւ : Եւրոպայի երգեր , զանազան տեղեր
վարկենապէս բռնկում ու վարկենապէս էլ
հանգչում են :

Այս կարգի երգերն աւելի արժէք ունին ,
սուսանախորտութեան համար , կարուկ բովան-
դակութիւնով , զգացմունքների եւ մտքերի տե-
սակներն ու փոխադարձ աղբնութիւնը պարզ ,
որոշիկ նկատելու եւ սահմանելու համար :

Պարերգերը շուտ են մոռանում մէկ էլ այն
պատճառով , որ իւրաքանչիւր եղանակ , խաղա-
պէս , ունի մի տուն բուն բանաստեղծութիւն
եւ կրկնակ . խաղ պարը , երբեմն , ժամեր է տե-
ւում : Այսքան երկար ժամանակի ընթացքում ,
եթէ եղանակը փոխել չը ինչդին , անընդհատ
երգում են օգտուելով ուրիշ երգերի եւ խաղերի
պատրաստի բառերի պաշարից , որից իւրաքան-
չիւր գիւղացի գիտէ մի քանի տամենակ տուն :

Այս հանգամանքը շնչում է պարերգի գե-
ղարուեստական , բուռնական հետաքրքրութիւն
պատճառով , երգաստեղծութեան գրաւորութիւնը
եւ դարձնում է մի տեսական ձանձրացուցիչ եւ

մեքենայական պահանջ : Երբ պարողները զաղա-
րում են , զաղարում է եղանակը , ու գործա-
ծութիւնից ընկնում երբ պոկ է գալի մի եղա-
նակ իր բուն եւ հիմնական բառերից , կորցնում
է հաւասարակշռող նեցուկը , կանգուն պահող
յինարանը եւ անշայտանում :

Երգի բառերն աւելի են ապրում , քան
եղանակը , որովհետեւ նոյն եղանակով կրկնուող
իւրաքանչիւր տուն բերում է իր հետ նոր թարմ
պատկեր , ուշադրութիւն գրաւում , հետաքրք-
րութիւն շարժում եւ կենանքն ապահովում :

Երգեցողութիւն

Փիւղացու երգական կարողութիւնը . — Ժո-
ղովրդի երգեցողութիւնն ունի ինքնուրոյն զբա-
րոց , ուր զաս են առնում ամենքը , ամեն ժա-
մանակ , երբ կարիք են զգում : Գեղջուկի զբա-
րոցը , ուսուցիչը եւ առարկան՝ բնութիւնն է :
Նա ձեռք է բերել ամենատեսակ փորձա-
ռութիւն , հմտութիւն եւ , բազմակողմանի ու
կենդանի երգերով , իր եւ բովանդակ բնու-
թեան զուարթ ու մտայլ սրտի յուզումները
պայծառ նկարելու կարողութիւն :

Իւրաքանչիւր գիւղացի քաջ գիտէ տեղա-
կան եղանակներն ու երգերն այնպէս , որպէս
բարբառը : Շատ զարգացած է բնազգաբար յաւ-
նարելու եղանակն կարողութիւնը , որ ձեռք
է բերել , կամաց կամաց , զարերի ընթացքում ,
մշտական փորձերով եւ սուր յիշողութիւնով ,
որոնց առաջնորդն է զգուշ լսողութիւնը :

Երգելու ժամին , իւրաքանչիւր գիւղացու
համար , հեղինակութիւն է լաւ խաղ ասողը :
Երբ սա մի նոր եղանակ է երգում , ներկայ
զանազաններն էլ սկսում են այնքան արագ ու
միաժամանակ կրկնել , որ լսողը կարծում է , թէ
եղանակն առաջուց գիտէին : Մանաւանդ պա-
րկիս իւրաքանչիւր մէկն ականջ է դառնում եւ
ուշադիր լսում ու մտիկ տալի պարագլխի եր-
գածին , որ չը լինի , ընկերներից յետ մնայ եւ
նոցա առաջ ամթթով , որովհետեւ պարագլխից
յետոյ , ամբողջ խումբը պէտք է երկէ նորա
երգածը :

Մտք սովորելու եւ ասելու սեղ ու ժամանակ .
— Գիւղական իւրաքանչիւր տեսակ երգ սովո-
րելու եւ ասելու յարմար տեղն ու ժամանակն :

ունի, որոնց հետ սերտ կապուած է :

Շինական երգերն ստեղծում, ասում եւ սովորում են գործի ժամին, տեղն ու տեղը :

Միասականերից հարսնեկանները երգում են հարսնիքի օրերին, որոշ տեղում, որոշ ժամին եւ ամեն մէկի բաժին երդն իր հերթին : Միւս ծիսականներն էլ յատուկ ուխտին : Օրինակ, վիճակի խաղերն ասում են Համբարձման :

Վիպական ու պատմական վիպաքնարական երգերը, որոնք լուրջ բովանդակութիւն ունին, ձմեռնային երկար օրերին : Երեկոները խմբեր են կազմում եւ զանազան տներում երգում, պատմում ու լսում : Միւս քնարական վիպականներն ասում են իրիկուան կամ ցերեկուան ազած, կամ թեթեւ գործի ժամին եւ, սովորաբար, բացօթեայ :

Խաղերն ասում են գրեթէ ամեն ժամանակ եւ ամեն տեղ. բայց յատկապէս՝ ուխտին, հարսնիքին աղջկայ տանը, գիւղական ուրախութիւններին եւ տարուայ գեղեցիկ երեկոններին՝ գիւղի հրապարակներում, փողոցների անկիւններում, կաշերում ու այգիներում :

Անտունի երգերն էլ խաղերի պէս ազատ գործածութիւն ունին, միայն թէ գիւղացին ստեղծում ու ասում է, երբ օտարութիւն է քաշում կամ իր պանդխտին յիշուի Սիրահարական անտունիներից են բռնում, երբ սաքացել են կեր ու խումբ մէջ :

Շատ զժուարութիւնով կամ ամոնեւին չեն երգում, նոյն իսկ ծաղը են անում, եթէ մի ոչ գիւղացի խնդրէ, որ, օրինակ, մի չինական երգ ասեն, երբ գործի չեն, այն էլ՝ տանը :

Ժողովուրդն արուեստական երգեցողութիւն ասած բանը չը գիտէ : Իւրաքանչիւր երգ իր տեղում, իր ժամանակին է ստեղծում կամ սովորում : Գործի ժամին՝ գործի երգ, տանը՝ տանու երգ միայն կ'ասեն : Ոչ մի գիւղացի, տանը նստած, կալի երգ չի ասի. որովհետեւ կալիբան ստեղծելու եւ ասելու տեղն է կալը. ուստի շատ օտարտոյ է երեւում, թէ ինչու են հետաքրքրել լինում մի երգով, երբ անտեղի եւ անյարմար ժամանակ է :

Իւրաքանչիւր երգ կապուած է գիւղական կեանքի մէկ րոպէի հետ եւ տալիս է միայն այդ րոպէի հաշիւը : Ժողովուրդը ժամանակից եւ

տեղից բաժան երգ չի՝ հասկանում, չի՝ ստեղծում եւ չի՝ էլ գործածում :

Շատ հետաքրքրական է երգի կամ պարի ժամանակ գիւղացի մանուկներին տեսնելը Այս ու այն ծակից ներս են մտնում, պզտիկ տղաները ձայն ու ծուռ դնում, երգողներին մտիկ տալի, նոցա հետ այս ու այն կողմ պըտայող գալի, մանրիկ բերաններն ակամայ քայց ու խոփ անելով երգում այնքան, որքան մանկան միտքը կ'ըմբռնէ եւ արտայայտելու վստահութիւն կ'առնէ :

Հէնց որ խաղը վերջանում է, վազում են մի ասանձին անկիւն բռնում, արծաթում դռներում են մեծերից լսածը :

Նոցա զուր է գալի երգի կարն ու պարը կրկնակը : Բառերի հետ ամենեւին զուգի չունին, որովհետեւ բովանդակութիւնը նոցա համար անմարս է :

Գիւղական երգեցողութեան ձևակերպ. — Հայ ժողովրդական երգեցողութիւնն օւնի թէ՛ միայնակ եւ թէ՛ խմբովին երգեցողութիւն : Միայնակը լինում է մէկ կամ երկու հոգով : Առաջին դէպքում երգում է միայն մի հոգի եւ մի ամբողջ երգ, կամ մի մասը :

Երկու հոգով միայնակ ասում են նոյն երգի զանազան տները, հերթով, փոխէ փոխ, նոյն եղանակով կամ ուրիշ եղանակով :

Այս ձեւը գործ են անում, սովորաբար, ծաղրական, սիրահարական եւ այնպիսի երգերի համար, որոնք զիմակի երգաստութիւնով պատկերացնում են խօսող, վիճող, ծաղրող, կրօնաւոր, սիրահարուած եւայլն մարդոց հարցն ու պատասխանը :

Խմբովին երգեցողութիւնն օւնի երեք ձեւ՝ պարզ, բարդ եւ խառն :

Պարզ է, երբ մի խումբ երգն սկզբից մինչեւ վերջ ասում է մենակ :

Բարդ ձեւն ասում է գալի, երբ երկու հօգի, երկու խումբ, մի հոգի եւ մի խումբ երգում են նոյն եղանակով, բայց օղակ օղակ կամ հանգոյց հանգոյց իրարու միանալով :

Մէկն սկսում է երգը եւ լրացնում ասում ջին երաժշտական նախադասութիւնը. նոյնը կրկնում է միւսը : Կրկնութեան վերջին յանգուոր ոտքից միանում է ասում ջին սկսողն էլ եւ

երգելով երկրորդի, կամ կրկնողի հետ մինչև առաջին, կրկնուող երաժշտական նախադասութեան վերջը, շարունակում է երկրորդ նախադասութիւն, որի վերջին յանգամանակը միանում է առաջին երգողը եւ կրկնում է երկրորդ նախադասութիւնն ամբողջ : Վերջին յանգամանակը միանում է նորից առաջին երգչիը եւ այսպէս, օղակ օղակ շղթայուելով, հանգոյց են կապում ամբողջ երգի սկզբից մինչեւ վերջը : Երբեմն միանում է մի խմբին մի ուրիշ զինդի խումբ եւ, իւրաքանչիւր իր անկախութիւնը պահելով, միմեանց հետ մրցում են հարց ու պատասխան տալով :

Այս դէպքում, ամեն մի խումբ, վերը նկարագրած ձեւով երգելուց զատ, իրար մէջ էլ փոխէփոխ են անում եւ հանգոյց կապում :

Բարդ ձեւերն աւելի յատուկ են պարերգերի համար :

Խառն ձեւն առաջ է դալի, երբ միայնակ կամ խմբով երգելն իրարու յաջորդում են առանց կանոնաւոր հերթ պահելու : Խառն եւ ապառ ձեւով ասում են գուծաներգերը եւ կլերգերը :

Բազմաձայնութեան եեռք. — Թէպէտ հայ ժողովրդական երաժշտութիւնը բազմաձայնութիւն չիդիտէ, բայց եւ յաճախ պատահում են դէպքեր, որոնք ցոյց են տալի կանոնաւոր երկու ձայնի նշաններ :

Երբ երգ սկսողը այնքան բարձրից է բռնում եղանակը, որ ձայնաստիճանը միջակ ձայններին է ճնշում, կամ այնքան կածից է առնում, որ բարձրերին է խեղդում, առեփոխները փոխում են ձայնաստիճանը եւ լարում իրենց ձայններին այնպէս յարմար, որ նորը հինին զաւանսուր լինի, որ վերջին եղանակը առաջինին համաձայն զայ :

Եւ երբ զանազան ձայնաստիճաններով լարուած եղանակներն ասում են պարերգի բարդ ձեւով, երկձայնութիւն է դուրս գալի :

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ

ՀԱՅ ԷՋԵՐ

Տաղ Ս. Աստուածածինի

Աղբիւր կենդանի, խլիւժուն զանազան,
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական.
Գըլուխ կուսանաց, Դասուց դու պարծանք,
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական :

Երեսիդ փափաք՝ Զօրքն վերսկան,
Էրանեալ լիտիր թաք (1) ու աննման,
Ժառանգող (2) դրախտին եւ արքայութեան,
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական :

Ի փառքս Լուսոյ Խորհրդիդ հիացման,
Երնող կենդանի Յիսուսի իջման,
Համաւոր բաժակ, Զեւորդ փրկութեան.
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական :

Ղամբար ճշմարիտ Մեծ ուրախութեան,
Յոսկի տուի խնժո՛ր, Նորոգւումն ական,
Շնորհիւ քո լըցան Որո՛քը Աղամեան.
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական :

Զարին հալածիլ (3), Պրտող սրբութեան,
Զա՛յ մաքուր ոսկի լուսով աննման.
Ռատվա՛զ (3) աղբիւր, ջուր անմահութեան,
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական :

Սըրովբէ սէր սուրբ վերին պետութեան,
Տուն Յիսուս որդւոյն եւ բնակարան,
Բարունի կուսից, Յաւոց քաւարան.
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական :

Իիւսեալ ի լուսոյ մայր ուրախութեան,
Մեռեալքս մեղօք (4) քեւ առողջացան.
Փառքք քո որդւոյն այժմ եւ յաւիտեան,
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական :

Դու լա՛լ մեծագին որ ի պատաշխան,
Եալով՛ ու զըմրութ եւ այլ պատուական,
Ա՛կ եւ լուսատու, գա՛նձ արքայական.
Մեղայ՝ քեզ մեղայ, կոյս անապական :

(1) Թերևս՝ Թագ. աւելի հաւանականաբար՝ Թրքերէն
« Թէք » ն է, « մէկ հատիկ » իմաստով : — (2) Զեռաց,
Ժառանգաւոր : (3) Զեռ, ծնող : (2) Զեռ, հալածիլ :
(3) Առատավազ . (4) Զեռ, մեղաւք :

